

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԷՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 16, 1930

ԹԻԻ 22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԳԻԾԸ ՓՐՈՅ. Զ. Ա. ՊԷԶՃԱՆՆ

Ր. ԹԱԿՈՐ

Բ. Մ. ԵՂԻԱԵԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՆԼՈՒԾԵԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ ՏՈԳԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՏՈԳԹ. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱԼԷՊ

ԲԱՅԱՌԻԿ ՊԱՏԵՆՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

(Կոչնակի Երեսնամեակին Առթիւ)

Հայ գաղթականներէն անոնք որ Կոչնակի կանոնաւոր բաժանորդագիրն (5 տօլար) վճարելու անկարող են, պիտի կրնան, բացառաբար, 1931—1932-ի տարեշրջանին համար, նոր բաժանորդ արձանագրուիլ,—

ՏԱՐԵԿԱՆ \$3.00-Ի ՓՈԽԱՐԷՆ

Ասիկա կարելի եղած է, շնորհիւ ԲԱՐԵՍԷՐ ԱՆՁՆԱԴՈՐՈՒԹԵԱՆ ՄԸ՝ որ Կոչնակի Երեսնամեակին առթիւ, մինչեւ \$500.00-ի գումար մը տրամադրած է, պայմանաւ որ, նոյնչափ զոհողութիւն մ'ալ ինք յանձն առնենք, որպէս զի Հայ գաղթականներէն, մինչեւ 500 հոգի, գիւրութիւն ունենան, Կոչնակի ճոր բաժանորդ արձանագրուելու ՄԻԱՅՆ ԵՐԵՔ ՏՈՂԱՐՈՎ:

Այս պատահութիւնը կը տրուի միայն հետեւեալ երկիրներու հայ կարօս գաղթականներուն.— ՀԱՅԱՍՏԱՆ, ՍԻՒՐԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՊԱՆԳԱՆ-ԵԱՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐ, ՖՐԱՆՍԱ, ՊԱՂԵՍՏԻՆ, ԵՒ ԿԻՊՐՈՍ:

Զեղչեալ բաժանորդագիրն, 3 տօլար, պէտք է ղրկել կանխիկ:

Այս պատահութիւնը պիտի տևէ 6 ամիս, մինչեւ 1931 Մարտ 31:

GOTCHAG PUB. CO. 331-Fourt Ave., New York, N. Y.

ԿԱՐԵՒՈՐ

Մեր բաժանորդներէն կը խնդրուի որ իրենց յետեալ պարսֆերը վճարեն ՏԱՐԻՆ չլրացած: Ազիզիյի եկեղեցիին. Հալէպ, յարգելի բաժանորդները հանին իրենց վճարումները ընել Պր. Մանուէլ Պօզեանի:

ԲԱՑՈՒԱԾ Է

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ»Ի Դ. ՏԱՐՈՒԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յառաջիկայ տարին Նոր Աւետարեք պիտի հրատարակուի 20 էջ, նոյն բաժնեգիրնով, որ է Սուրբոյ համար տարեկան 150 զրուշ սուրի. և արտասահմանի համար մէկուկէս տօլար: Նոր տարիէն սկսեալ պիտի ընդունուի ամէն կարգի ծանուցումներ ղիւրամատչելի գիրներով:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋՐ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿՐ

Ազատ քաղաքացիական Չարյա Տիգրանի
գրուածներէն

ԳԼՈՒԽ Գ.

Այս խաղին անունն էր Այո—Ոչ։ Սքրուծին քեռորդին իր միտքը բան մը կը պահէր, և միւսները պէտք է որ գիտնային։ Ասոր համար ալ իրեն կրնային հարցնել միայն այնպիսի հարցումներ՝ որոնց պատասխանը կամ 'այո' կամ 'ոչ' կրնար ըլլալ։ Արդ Սքրուծի քեռորդին յայտնեց ամէնուն թէ իր միտքը անասուն մը պահած է, և առաջարկեց որ գիտնան։ Հարցումները սկսան տեղալ ամեն կողմէ, և Սքրուծի քեռորդին տուած պատասխաններէն հասկցուեցաւ թէ այդ անասունը հիմայ կ'ապրէր, թէ ան անհաճոյ կենդանի մըն էր, վայրենի էր, թէ երբեմն քթին տակէն կը մրմռար, երբեմն ալ կը խօսէր, թէ ան Լոնտոնի մէջ կը գտնուէր և փողոցներուն մէջէն կ'անցնէր, թէ ոչ ոք զայն կը ցուցադրէր հասարակութեան, թէ ան գառազեղի մը մէջ գրուած չէր, թէ ոչ ոք կ'ուզէր զայն զարնել, թէ ան ձի չէր, ոչ ալ էջ, կամ կով, կամ ցուլ կամ վագր, կամ չուն, կամ խոզ, կամ կատու, կամ արջ։ Ամէն նոր հարցումին Սքրուծի քեռորդին իր խնդուքը չէր կրնար զբաւել, և այնքան գերազրդիւ կերպով կը ծիծաղէր որ յաճախ կ'ստիպուէր ոտք ելլել և քայլ մ'երկուք առնել՝ որպէս զի իր խնդումի թափը իջեցնէր։

Վերջապէս իր ամէնէն սրամիտ քայրը, միւսնոյն գիրուկ աղջիկը՝ բարձրաձայն գոչեց խնդալով, «ես գտայ», ևս գտայ, Թրէտ, ևս գիտեմ մտքիդ մէջը անասունին անունը։»

— Ըսէ նայիմ ի՞նչ է, ըսաւ Թրէտ։

«Բու մօրեղբայրդ Սքրու... ու...»

ճըն է։» Եւ իրաւ ալ ան էր. ամէնքն ալ ապշեցան մնացին։ Իսկ ոմանք սկսան գանգատիլ թէ ինչո՞ւ ուրեմն «ոչ» ըսաւ երբ իրենք «արջ է» հարցուցին։ Ոչ ըսելուն համար էր որ իրենք Սքրուծի անունը չը տուին, պէտք էր «այո» ըսել։

Իսկ Սքրուծի քեռորդին զանոնք բնդմիջելով՝ ըսաւ. «Մեր այսքան ուրախութեան պատճառն ինչ է, և կարծեմ սխալ չըլլար եթէ իր կենացը բաժակնիս պարպենք, ուրեմն Սքրուծ մօրեղբոր կենացը,» և զինի թաժակները լեցնելով հրամայուց ամէնուն, որոնք իսրտէ գոչեցին, «Այո, Սքրուծ մօրեղբոր կենացը։»

«Ծերունի մօրեղբորս Ծնորհաւոր Ծընունդ և երջանիկ Նոր Տարի կը մաղթեմ,» ըսաւ Սքրուծի քեռորդին, «գիտեմ, թէ և իմ կողմէս Ծնունդի շնորհաւորութիւն չընդունիր, բայց հոգ չէ, ես իմ սրտապին մաղթանքս կը նուիրեմ իմ սիրելի Սքրուծ մօրեղբորս։»

Սքրուծ անզգալաբար այնքան փոխուեր էր, և իր զգացումները այնքան ուրախ ու թեթեւ էին որ կ'ուզէր իսկոյն միւսնոյն հաճելի եղանակաւ պատասխանել իրեն ուղղուած մաղթանքներուն և շնորհակալ ըլլալ, եթէ Ոգին իրեն պատեհութիւն տար։ Սակայն այդ ամբողջ տեսարանը իր քեռորդւոյն վերջին բառին վրայ աներևոյթ եղաւ, և Սքրուծ ինքզինքը Ոգիին հետ միայնակ կանգնած գտաւ փողոցին մէջ։ Եւ ապա նորէն սկսան շարունակել իրենց ճամբորդութիւնը։

Շատ տեղեր զացին, շատ բաներ տեսան, որոնց ամէնուն ալ վերջաւորութիւնը խիստ երջանկաբեր էր։ Հիւանդներուն քով զացին, որոնք զուարթացան, օտար երկիրներ եղողներու քով զացին, որոնք ինքզինքնին միսթարուած զգացին։ Չարչարուողներուն մօտեցան, և անոնք աւելի համբերութիւն ստացան, աղքատներու քով զացին, ու

անոնք հարստացան, անկեղանոցները, հիւանդանոցները, բանտերը, և ամէն տեսակ խեղճերու բնակավայրերը այցելեցին՝ որոնց դռները մարդկային փոքրիկ իշխանութիւնը չէր կրցած այնքան ամուր գոցել՝ որ այս բարի Ոգին չի կըրնար ներս մտնել, և ամէն ուր ուր մտան հոն Ոգին օրհնութեամբ լեցուց, և ասանկով սորվեցուց Սքրուճի այն զոր կ'ուզէր սորվեցնել:

Այն գիշերը խիստ երկայն գիշեր մըն էր. ու Սքրուճ կը մտածէր: Արդեօք այսչափ զէպքեր միայն մէկ գիշերուան մէջ կարելի էր որ պատահէին, մարդ կը տարակուսի: Ու Սքրուճ կը զարմանար նաեւ տեսնելով որ այդ կարճ ժամանակին մէջ Ոգին սկսեւ էր ծերանալ անոր մազերը երթալով աւելի ճերմակցան, մինչեւ որ բոլորովին ճերմակ եղան:

«Ոգիներու կեանքը այսչափ կարճ կ'ըլլայ», Հարցուց Սքրուճ:

«Իմ կեանքս այս երկրիս վրայ խիստ կարճ է», ոտաւ Ոգին, «Այս գիշեր պիտի վերջանայ»:

— Այս գիշեր... գոչեց Սքրուճ:

«Այո, այս գիշեր, ճիշդ կէս գիշերին մօտիկ ըրէ, ժամանակը կը մօտենայ»:

Ու ժամը մէկը երեք քառորդ անցած ըլլալը կը հնչեցնէր:

«Ներքէ ինծի եթէ ինծի չը վերաբերող հարցում մը կ'ընեմ», ըսաւ Սքրուճ ուշադրութեամբ ոգիին զգեստին նայելով, «զգեստիդ քղանցքին մէջէն տարօրինակ բան մը դուրս ցցուեր է, ո՞տք թէ ձեռք, եւ որո՞ւ կը պատկանի»:

«Եթէ վրան միս մնացեր է, ձեռք ըլլալու է», պատասխանեց Ոգին, և «Տե՛ս», ըսելով իր զգեստին տակէն դուրս հանեց երկու մանուկներ, որոնք չափազանց խեղճուկ, նիհար, և երկչոտ կերպարանք մ'ունէին. ասոնք անմիջապէս ծնրադրեցին և ոգիին քղանցքին փաթթուեցան:

«Ո՛վ մարդ, հոս նայէ, հոս», գոչեց Ոգին:

Ասոնցմէ մէկը մանչ էր, միւսը աղջիկ. երկուքն ալ դեղնած, նիհար, սարսափահար նայուած քով, ցնցոտիներու մէջ, միւսնոյն ատեն երկուքն ալ իրենց զլուխները մինչև գետինը ծռած, խոնարհութեամբ Ոգիին առջև կը կենային:

Ասոնց գէմքերը փոխանակ գիրուկ, կարմրուկ և թարմ ըլլալու՝ կարծես թէ տարիներու խորշոմած ձեռքի հպումովը թօշնած, թուլցած ու տագնաւած էին: Ասոնց աչքերը փոխանակ հրեշտակային քաղցրութիւն արտայայտելու, դիւային սարսափ մը կը ցոլացնէին: Միթէ կարելի՞ է որ մարդկային արարածը այսքան սոսկալիօրէն փոխուի, անասնանայ, հրէշանայ, սաղայեղանայ...:

Սքրուճ սարսափած ետ քաշուեցաւ: Կարծես թէ ինչ աղուոր մանուկներ են», պիտի ըսէր, բայց անոնց այս վիճակը անանկ վատ ազդեց իրեն՝ որ բռնորդ ինքնին խեղդուեցան, ու չը կըրցաւ ստել:

«Ով Ոգի, ասոնք քու զաւակներդ են», հազիւ կրցաւ հարցնել:

— Ասոնք մարդու զաւակներ են, ըսաւ Ոգին, անոնց նայելով, և իրենց ծնողքէն փախեր են ու ինծի կը փաթթուին: Այս տղուն անունը Տգիտուութիւն է, այս աղջկան անունը Կարօտութիւն է: Զգուշացիր ասոնց երկուքէն ալ, բայց մանաւանդ այս տղայէն որովհետեւ իր ճակատին վրայ գրուած կը տեսնեմ «ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ», եթէ այդ բառը անկէ սրբող մը չը գտնուի: Եթէ կ'ուզես, մի հաւատար, և ծաղրէ այդպէս ըսողները, կամ ընդհակառակը եթէ կ'ուզես, ընդունէ աս ըսածս, և դու ևս դատապարտէ զայն, թող երթայ աւելի գէշ ըլլայ, սակայն վերջը...»:

«Ասոնք ապառտանելիք տեղ մը կամ ապրելու միջոց մը չունին», հարցուց Սքրուճ:

(Շար.) 27

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 16, 1930

ԹԻԻ 22

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻԶ ԳԻԾԸ

Է. ԽՂՎԵՐՋ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ունէ մէկ ընկերային կազմակերպութեան, հաստատութեան կամ շարժում մէն պէտք է ակնկալենք այն որ անոր նպատակին սահմանին մէջ կը գտնուի, և իրաւունք չունինք ակնկալելու ինչ որ անոր նպատակէն դուրս կը մնայ: Ահա այս է գնահատումի չափանիշը ունէ արժէքի մը համար: Հայ Աւետարանականութեան համար այս չափանիշը հոգեւոր է՝ քանզի անոր նպատակը հոգեւոր է, ինչպէս որ յայտնուեցաւ մեր վերջին յօդուածին մէջ: Ուստի Հայ Աւետարանականութեան ներկայ և անցեալ բոլոր գործունէութիւնը, անոր տարբեր շարժումներու հետ ունեցած ազդերը, ուրիշ եկեղեցիներու և կազմակերպութիւններու հանդէպ դիրքը, ունէ հաստատութեան կամ ոյժի հետ ունեցած եւ ունենալիք գործակցութիւնը, ապագայ բոլոր ծրագիրները պէտք է դիտել այս հոգեւոր դիտակով, անոր համեմատ գնահատել անցեալն ու ներկան և ընդգրկել ապագան որոշող ուղղութիւն մը:

Աւետարանականութիւնը կրնայ գործակցիլ ունէ ընկերային, կրօնական, կրթական և այլն հաստատութեան հետ և օժանդակել անոր, երբ հոգեւոր կեանքը անոր միջոցաւ վերելքի նոր թափ մը կ'ստանայ: Իսկ չի կրնար, եւ երբեք պէտք չէ գործակցիլ ունէ կազմակերպութեան կամ ոյժին հետ եթէ հոգեւոր

արժէքները անտեսուելու և զոհուելու վտանգին մէջ կը գտնուին: Աւելորդ կը նկատենք հոս կրկնել թէ որո՞նք են այս հոգեւոր արժէքները՝ զանոնք պարզած ըլլալով «Նոր Աւետարան»ի անցեալ տարուան թիւերուն մէջ:

Մինչև հիմա մենք խօսեցանք աւետարանականութեան եւ ո՛չ Աւետարանական Եկեղեցիի մասին: Ասոնք երկու տարբեր բաներ են, թէպէտ՝ իրարմէ անբաժան: Աւետարանականութիւնը հոգի է, մ. ի. Ա. Եկեղեցին անոր մարմինը. առաջինը գաղափար է, երկրորդը՝ անոր իրականացումը: Առաջինը անփոփոխ է, իսկ երկրորդը՝ փոփոխական. առաջինը տեւական է, իսկ երկրորդը՝ անցաւոր: Առաջինը տիեզերական կամ ընդհանրական է, երկրորդը՝ յարանուանական: Աւետարանականութիւնը հիմնուած է Աւետարաններու մէջ պարզուած Աստուածային կեանքին վրայ, որ կը կազմէ Աւետ. Եկեղեցիին իտէալը, որուն իրականացման համար ինքը միջոց մըն է: Աւետ. Եկեղեցին այնքա՛ն արժէք ունի որքան որ ան կը մարմնացնէ այդ հոգին, կ'իրականացնէ այդ գաղափարը, իր մէջ կը ցոլացնէ Յիսուս Քրիստոսի կեանքը:

Աւետ. Եկեղեցին կը փոխուի և պէտք է փոխուի, երբ նոր պայմանները անհրաժեշտ կը դարձնեն զայն, որպէսզի

Քրիստոսի կեանքը նոր և աւելի լոյսով մը փայլի մարգերու մէջ: Եւ երբ ան այնպիսի ձեւ մը ստանայ որով անպէտ նոյն իսկ արգելք կը հանդիսանայ աւետարանականութեան՝ պէտք է վերջ տայ իր գոյութեան, և եթէ անձնասիրութիւնը կ'ունենայ իր գոյութիւնը տեւականացնելու, ինքնաբերաբար տեղի պիտի տայ նոր աւետարանական ոյժի մը առջև որ իրմէ պիտի խլէ իր սուրբ պաշտօնը:

Աւետարանականութիւնը սահմանափակուած չէ միայն Աւետ. Եկեղեցիին մէջ, անկէ կը գտնենք առաւել կամ նուաճ չափով ամէն տեղ: Աւետ. Եկեղեցիի զաւակը անպայման աւետարանական է, ո՛չ ալ ուրիշ ոնէ եկեղեցիի մը զաւակը անպայման ոչ աւետարանական է: Աւետ. կեանքը ուղղակի Քրիստոսի հետ սերտ յարաբերութենէն կը բղխի: Ունէ եկեղեցիի մը պաշտօնն ու պարտականութիւնն է այս յարաբերութեան մշակումին համար պէտք եղած դիւրութիւններն ու պայմանները ստեղծել: Աւետ. Եկեղեցին ահա կը

շանայ յարմարագոյն միջոցներ ստեղծել որպէսզի Քրիստոսի կեանքը կարելի առաւելագոյն չափով վերարտադրուի մարդոց մէջ:

Հոս երկու հարցեր կը ներկայանան մեզի: Առաջին՝ թէ Հայ Աւետ. Եկեղեցին որչա՞փ յաջողած է արժեքներ իր աւունք և իր նպատակին համեմատ արգիւնք տալ անցեալին մէջ. ասոր պատասխանն է մօտ մէկ դարու պատմութիւն մը զոր կը թողունք պատմագէտներուն: Երկրորդ՝ թէ ներկայիս Հայ Աւետ. Եկեղեցին որչա՞փ հաւատարիմ է իր նպատակին, թէ ի՞նչ է անոր ներկայ գործունէութեան հոգևոր արժէքը. և զէպի ու՞ր է անոր ուղղութիւնը: Ասիկա կը կարօտի խոր և անաչառ ուսումնասիրութեան, զոր պէտք է ընել որպէսզի Հայ Աւետ. Եկեղեցին աւելի պիտակից կերպով ծրագրէ իր ներկայ և ապագայ գործունէութիւնը: Եթէ մէկ բառով կարելի է ասոր պատասխանել պիտի ըսենք թէ ՀՍԹ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ՊԷՏԲ Է ԱՒԵԼԻ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՆՍ:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԱԽԱՆԱՆԲԸ

Պատասխանելով այն քննադատութեան թէ Ժողովականներ Անգլիոյ մէջ միադաւաններու գործը կը կատարեն, և մեծ մասամբ տրդիապաշաներէ կը բաղկանան Տր. Ու. Պ. Սէլպի կը գրէ.

«Ժողովականները աւելի և ոչ թէ պակաս կարեւորութեամբ կը շեշտեն Յիսուս Քրիստոսի իր Ժողովուրդին մէջ կենդանի ներկայութեան պէտքը՝ ճշմարիտ եկեղեցի մը կազմելու համար, ինչպէս նաև Աստուծոյ Հոգիին տեւական գործողութեան պէտքը՝ մարդերը բոլոր ճշմարտութեան առաջնորդելու մէջ

...Մարդու մը քրիստոնէութիւնը արմատացած կամ հաստատուած չէ ճշմարտութիւնը բացատրելու համար անոր տուած իմացական տարազին մէջ, այլ Յիսուս Քրիստոսի հետ ունեցած իր անձնական յարաբերութեան մէջ: . . . Մարդիկ քրիստոնեայ չեն ըլլար Աստուծոյ, կամ Քրիստոսի մէջ յայտնուած Աստուծոյ մասին իրենց խորհածներովը, այլ Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ Որդւոյն և աշխարհի Փրկիչին հանգէպ իրենց ունեցած անձնական գիրքովը»:

«Ամէն մէկ մարդուն հոգին սինեակ մ'է ուր Յաւիտենականը կը փոփոսայ»

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԳԻՋԸ

Գրեց՝ ՓՐՈՖ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

Առօրեայ կեանքին առնուած օրինակներով յարգելի փրոֆեսորը ժողովրդային բարոյականութեան բարսխոս մեկ կէտը կը մտնանշէ, քեյարեղով միեւնոյն ւսեմ միշտ պիտի եղած հասկնասական հիշող կարեւորութիւնը սալ ունէ մեկ երեւոյթին առաջնակարգ եւ երկրորդական կողմերուն: Անշուշտ Կիրակիի հանդէպ յարգանքի պակասութեան պիտի չի վերագրել այդ օրուն մասին եղած ակնարկունը, մենք միտնեմք թէ Փրոֆ. Պեճճեան ասիկա մտքին իսկ չ'անցնէր, այլ ասով երեւան կը հանէ ուրիշ մեծագոյն յանգանակներու մեջ գտնուողներու հանդէպ դասաւարտելի շուրջինը:

Ծ. ԽՄԲ.

Մի քանի տարիներ առաջ Կ. Պոլսոյ մէջ հետեւեալ դէպքը պատահեցաւ: Իսլամ պիշ մը կը սիրահարի կալթաբանակ Լուիզա անուն Հրեայ երիտասարդուհի մը, զոր կ'սկսի փոթեռանդն հետապնդել: Աղջիկը կրկին ու կրկին կը մերժէ յիշեալ պէյը: Երիտասարդը հասկնալով որ չպիտի կրնայ իր նպատակին հասնիլ իր ատրճանակը կը քաշէ և փողոցին մէջ հրապարակաւ կը կրակէ եւ կ'սպաննէ Լուիզան, որ իր քրոջ հետ օր մը կէսօրէ հտքը կը պտըտէր կալթայի է'ն բանուկ պողոտային վրայ: ապա ոճրագործը հանգարտօրէն կ'անցնի կ'երթայ: Հրեաները իրաւացի կերպով կը յուզուին եւ յաջորդ օրը փառաւոր եւ քիչ մը աղմկալից յուզարկաւորութիւն մը կը կատարեն: Փոխանակ ոճրագործը ձերբակալելով անոր արդար պատիժը տալու՝ անմիջապէս սկսան շատ մը ակնաւոր Հրեաները բանտարկել եւ հետապնդել, սպանեալ աղջիկին յուզարկաւորութիւնը կառավարութեան հանդէպ արհամարհանք նկատելով: Իսկ բուն

ոճրագործը ատեն մը գրեթէ մոռցուեցաւ: Բանտարկեալ Հրեաները շատ նեղութիւն կրելով և մեծ գումարներ ծախսելով հազիւ կրցան մի քանի շաբաթ հտքը օձիքնին ազատել: Իսկ ոճրագործ պիշը ամիսներ վերջը միայն հետապնդուեցաւ, եւ իթէ չեմ սխալիր, իբր խնդ նկատելով թիթե պատիժով մը ազատեցաւ:

Ահա բարոյական տարօրինակութիւն մը: Ոճիրը և ոճրագործը, որոնք բուն խնդրոյ առարկայ պէտք է ըլլան, կ'անտեսուին, իսկ անդին երրորդական չորրորդական աստիճանէ իսկ կարեւորութիւն չունեցող սպանեալի յուզարկաւորութեան կերպը առաջին աստիճանէ կարեւորութիւն կ'ստանայ: Ուշտը կը կըլլուի, ճանճը կը քամուի: Ասիկա միայն թուրքիոյ և թուրք կառավարութեան յատուկ թերութիւն մը, տարօրինակութիւն մը չէ, այլ սովորական կեանքի մէջ շատ տեղեր յաճախ մեր հանդիպած մէկ երևոյթն է: Յաճախ տեսնուած բարոյական տկարութիւն մ'է՝ կարեւորը, էականը անտեսել եւ անկարեւոր ու երկրորդական դէպքերով, պարագաներով զբաղիլ:

Ահա բարի, անձնուէր, բարեգործ մարդ մը: Կիրակի օր մը տաքէն կը նեղուի, և շուկայէն անցնելու ատեն պաղ օշարակ մը կը խմէ: Ահա քեզի մեծ դէպք մը: Այդ մարդուն նկարագիրը, ծառայութիւնը, բարեգործութիւնը բոլորովին կը մոռցուի, վայ եկեր է անոր գլուխին, որ կիրակին պահելու մէջ թերի կը նկատուի: Անդին անբարոյական գէշ բարքով մէկը կայ, շատեր գլտեն թէ անիկա ի'նչ է, բայց կը լռեն:

Օր մը կերպով մը անոր իսկական գոյնը երևան կ'ելլէ: Ասիկայ ինչպէ՞ս երևան ելաւ, ո՞վ երևան հանեց, ի՞նչ պարագաներու տակ մէջտեղ ելաւ, և այլն հարցերով ժողովուրդը այնքան կ'զբաղիր որ բուն յանցանքը զրկել կը մոռցնէր: Առևտրական մի՞ծ հաստատութեան մը մէջ պաշտօնեայ մը զեղծում մը կը գործէ, և մեծ գումար մը կ'իւրացնէ: Բարեփրական գործ մը վարող անձի մը վարչական թերութիւնները կը գտնուին, թերևս իր պաշտօնին մէջ անհաւատարիմ ալ կը գտնուի: Բայց ժողովուրդը զարմանալի մտայնութիւն մը կը ցուցնէ, փոխանակ քննելու թէ արդեօք ի-

րապէս զեղծում, անհաւատարմութիւն, թերութիւն կա՞յ թէ չէ, կ'սկսի հետաքրքրուիլ ո՞ր հարցերով թէ ո՞վ ասոնք երևան հանած է, թէ ինչո՞ւ, ե՞րբ և ի՞նչ առթիւ: Առաջին տեղը պարագաներուն կը տրուի և ոչ՝ բուն իրողութեան: Ժողովուրդին հոգեբանութիւնը ահա այսպէս է: Հազնոյդ կը մոռնայ հազուատովը կ'զբաղի, միջուկը կը մոռնայ կեղեւովը կը հետաքրքրուի: մարդը կ'անտեսէ շուքը կը հետապնդէ:

Եթէ Սողոմոն հիմա ապրէր անպատճառ պիտի ըսէր. «Ունայնութիւն ունայնութեանց, այս ալ ունայնութիւն է:»

ՐԱՊԻՆՏՐԱՆԱԹՆ ԹԱԿՈՐ ԺԷՆԵՒԻ ՄԷՁ

Դ. Եւ Վերջ

Գրեց՝ Բ. Մ. ԵՂԻԱԵԱՆ

Ահա Հնդկաստանցին՝ Արիւհիլքի մարգը՝ իր ներքին դիմագծին քանի մը յատկանշերովը:

30 քիլոմէտր ճամբայ կ'երթամ զինք տեսնելու համար, և հարկ կ'ըլլայ որ մէկ ու կէս ժամ սպասեմ վերանտային մէջ: Առջեւ են իր անգլիերէնով գրուած կամ թարգմանուած գիրքերը, որոնք քով քովի դրուելով մէյմէկ մեղրնոց երկու դարակ լիցուցած են: Ասոնցմէ կ'ընտրեմ ու կը կարդամ, (The Creative Unity) ն: Վերջապէս՝ ահա հաւաքուած են հրաւիրեալները: Կուգայ ինքը ևս: Միջակէն քիչ բարձր հասակով՝ ազդու կազմ մը ունի ան: Վրան առած է սև պատմուճան մը որ շատ կը նմանի մեր հոգեւորականներու սքեմին: Ոտքերուն մուճակ հագուած է: Մորթը թիթե թուխ է՝ և պղինձի փայլով. չունի շեշտուած այդ հնդկ գոյնը. աւելի նման է ճերմակներու թխամորթին: Հակառակ իր յառաջացած տարիքին—69 տարեկան է—կը ցուցնէ երիտասարդի-

կայտառութիւն: Ունի թաւ փայլուն մազեր՝ արծաթի գոյնով, որոնք իր գլուխէն վար կը կոհակաւորուին մինչև իր ծոծրակները՝ ետեւի մասէն, իսկ երկու կողմերէն՝ կը խառնուին իր մօքուքին, որ՝ նոյն գոյնով ու փայլով բայց աւելի ցանցառուած՝ կը տարածուին լանջքին վրայ: Աչքերը գրիթէ միշտ վար հակած կը մնան. բայց ընդհատ ընդհատ վիր կուգան և շեշտակի կ'ուզողուն վրադ: Շատ կակուղ, մեղմ կ'երեւին անոնք: Դանդաղ՝ յամր կը շարժին իր կողերը, նոյնպէս աչքերը, որոնցմէ դուրս կը զեղու համակրալիր գիտակցութեան և ոյժի հանդարտ՝ խաղաղ հոսում մը որ լրջութեամբ կը պարուրէ քիզ: Կ'զգաս որ իր լուրջ նայուածքին մէջ կայ խոկմունք և հետաքրքրութիւն և խորունկ ըմբռնողութիւն:

Ատեն մը նստած կը մնայ լուռ, և զլիւի ու նայուածքի յամր դարձուածքով կը տեսնէ իր շուրջը: Միմոտորտը պատկառանքով լիցուած է: Կ'արձեւ

իրմէ կ'արտահասի մեծութեան ոգի մը: Հիմայ կ'ըմբռնեմ գաղտնիքը իր հեղինակաւորութեան:

Վերջապէս՝ Ազգերու Լիկայի մասին խօսք մը կը խնդրուի իրմէ: և ան կ'սկսի յայտնել իր նկատողութիւնները: Ճառ մը չէ որ կ'արտասանուի: չունի հետորականութիւն: Պարզ կերպով կը խօսի միայն, և իր բառերը կ'ընտրէ և իմաստութիւն ունի: Աւելի՛ պիտի ըսէ՛ ինքն իր անձին համար խորհրդածութեան մը մէջ է, միայն սա տարբերութեամբ՝ որ իր խորհուրդները բարձրաձայն կուգան կ'անցնին իր մտքին մէջէն ու մենք՝ իր շուրջը գտնուողներս ալ կը լսենք այդ խորհուրդները: Զի խօսիլ միայն բարձրաձայն կը խորհի: Մեղմ ձայն մը ունի՝ գրեթէ զուրկ առնական շեշտէ, որ դժուարաւ կը լսուի սկիզբը, բայց կը բարձրանայ ու կը հաստատուի քանի յառաջանան իր խորհրդածութիւնները: Հաճելի է մտիկ ընել իր խօսքերուն, որոնք քնքուշ յուշիկութեամբ կ'իջնան կը մաղուին ներկաներուն վրայ, ինչպէս խաղաղ անձրեւը մարգերուն վրայ: Ան կը խօսի ժամուայ մը չափ, հարց ու պատասխանով ընդմիջելով իր խօսքերը, համաշխարհային խաղաղութեան հոգեբանական հանգամանքին, ազգերու փոխադարձ յարաբերութիւններուն մէջ մտքի կատարելիք գերին, Ազգերու Լիկային մէջ՝ քաղաքականապէս տկար բայց իւրապատուկ մշակոյթով ուրիշ ժողովուրդներու ալ ներկայացուելուն, արդի երթաւորութեան կորովի մտածողութեան մէջ փտնուող յեղաշրջական յոյսին, և դարուս մեծ առաքելութեան մասին:

Հիւրերը ցրուելէն վերջ կը մօտենամ իրեն ու պաշտօնակիցները կը փոխան խօսակցելու: Վերջինից իրեն որ հայ մըն եմ: Զեռքս կ'առնէ իր մոտաւայց պինդ ձեռքին մէջ զօրաւոր սեղումով մը, ու ես՝ չգիտեմ պատկառամբ ի՞նչ ազդեցու-

թեան տակ՝ Արեւիքցի բնագոյն արթննալով մեքենաբար վեր կ'առնեմ իր ձեռքը ու կը տանիմ շրթունքիս: Andrews քովս զարմացած կը դիտէ: Եւ Թակոր կը խօսի: «Շատ հետաքրքրած է զիս Ձեր ժողովուրդին պատմութիւնը: Կենդանի պատկերացումը գաղափարական արժէքներու համար մաքառող ազգի մը կեանքին: Ապահովաբար ներքին ոյժ մը վեր բռնած է զայն: Հնդկաստանի օրինակն ալ նոյնն է: Ժողովուրդի մը սրտին մէջ քանի կենդանի է յատուկ առաքելութեան մը զգացումը՝ այդ ժողովուրդը կը կանգնի:»

Թակոր ժընկել Հայ Ուսանողաց Տան՝ «Հայաստան» ին՝ նուիրած է նաև իր մէկ պատկերը՝ ստորագրուած իր խոշոր ձեռագիրով:

Բայց ես մտքիս մէջ կը պահեմ իր այդ պատգամին իմաստը, որ կուգայ հոգեկան իրականութիւններու և խորունկ ճշմարտութիւններու գիտակցութեան մը: Այո՛ կ'ապրի այն ժողովուրդը որ աշխարհի վրայ կատարելիք Յատուկ Առաքելութեան մը գիտակցութիւնը ունի իր մէջ, որ գիտէ թէ Ազգային Ընծայ մը ունի իրերիք մարդկութեան խորանին առջեւ: Պիտի անհատի այն ազգը որ տեսիլք չունի: Պիտի բարձրանան միայն անոնք որոնք իրենց կեանքէն մեծ երազներ ունին և կը ձգտին զանոնք իրականացնելու: Եւ անցեալի մէջ երբ հայը ապրած է, ապրած է իր այդ ոյժովը, միշտ բարձր կայնած իր կոչումի պատենէին վրայ, և արժեցուցած է իր գոյութիւնը՝ իր կատարած որոշ առաքելութիւններով: Հայը ճշմարիտ ճանաչող ժողովուրդ է, և դեռ հոն է իր փրկութեան փառքսը: Ան պիտի ապրի որչափ աստիճանով որ իր մէջը կ'զգայ մասնաւոր առաքելութեան մը կոչումը և կը ձգտի գայն կատարելու:

Ի՞նչ Ազգային Առաքելութիւն կը զգանք ներկայիս, այդ է էականը:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՆԼՈՒԾԵԼԻ ՏԱՍԸ ՄԵԾ ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Քաղեց՝ ՏՈԳԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Գիտութեան առջև կը պարզուին տասը տիեզերական հսկայ առեղծուածներ, որոնց լուծման համար մեծ գիտարաններէն Տր. Հարլօ Շափլիի նման գիտուններ կը ճգնին գիտութեան էվէրէսթի բարձունքները մագլցելու անկէ գիտելու տիեզերքը և ընդլայնելու գիտութեան աշխարհին հորիզոնը:

Մթնոլորտին վերին խաւերու զաղտնիքները յուսալից է ստուգուին մօտերս, ծնունդ տալով որոշ բարիքներու, իսկ տիեզերական յեղաշրջման և մարդուս գիրքը անոնց նկատմամբ՝ հաւանական է որ միշտ մնայ երազ մը գիտութեան առաջ:

1—ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Վերջերս գտնուած նոր Զրդ փուլթօ մոլորակը՝ պիտի յեղաշրջէ հին տեսութիւնները և ամէն վայրկեան նոր նոր մոլորակներու գիւտելու լուրեր պիտի հաղորդէ մեզի:

2—ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻՆ ԿՆՃԻՌԸ

Փլութոյի գիւտը վերջ տուաւ այն տեսութեան թէ մոլորակները արեւէն զատուած հատուածներ են: Արեւը, ծանօթ մոլորակները եւ ուրիշներ ալ կը պատկանին մէկ միգամածային գրութեան ու անոնց մասին գիւտ ուրիշ յայտնութիւններ ըլլալու վրայ են:

3—ՎԵՐԻՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ

Անթափանցելի մթնոլորտի հեռաւոր խաւերը, այն ուրախալի յոյսերը ունին ժողովուրդին սրտին մէջ թէ՛ օր մը Ժիւլ վերնական հրթիւ մեքենաներով կարելի պիտի ըլլայ ոտք դնել մեզի մերձաւոր, զրացի մոլորակին վրայ. բարձրագոյն մթնոլորտի խաւերը դեռ անլուծելի հանելուկներ են գիտութեան առջև: Մեր շինած ջերմաչափ և մեքենաները հոն չեն հասնիր:

Մթնոլորտը կը տարածուի անսահմանօրէն մեր երկրի մակերեւոյթէն մի քանի հարիւր մղոն անդին: Ասուպները 40-100 մղոն հեռաւորութեան վրան կը սկսին օդին հետ չփռւալ տեսանելի դառնալ: Ասուպները կը սորվեցնեն մեզ թէ մօտ 50 մղոն հեռաւորութեան մը մէջ կրկին ջերմութիւն կայ նման երկրի մակերեւոյթին, իսկ երկուքին մէջ տեղ ցրտութիւն կը տիրէ ինչպէս կը վերջին սաւառնորդները:

4—ՈՒՐԻՇ ԱՇԽԱՐՀՆԵՐ

Արդեօք Հրատ մոլորակը ունի՞ մըտացի արարածներ որոնք մեզի նշաններով յայտնել կ'ուզեն իրենց միտքը: Արուսեակը չունի՞ արդեօք կեանք ունեցող արարածներ՝ իր այդ թանձր մութ ամպերու ետին: Ուստիաւալի ներ տարակարծիք գաղափարներ ունին այս հանելուկներու հանդէպ: Գիտական վերջին հետապնդումները ի ցոյց դրին խիստ նուրբ գործիք մը «թիմօքուբլը» (themocougle) որով Հրատի մթնոլորտը քննուելով տեսնուած է որ աւելի յարմարագոյնն է կեանքի տեսակէտէ: 200 մատնաչափ նոր հսկայ հեռագիտակը պիտի խորասուզի Արուսեակի թուխ ամպերէն ներս եւ մեզի նոր գաղտնիքներու գուռներ պիտի բանայ:

Եթէ ուրիշ մոլորակներու մէջ կեանք գտնուի ուրեմն մենք պէտք չէ պարծենանք որպէս տիեզերքի տէրը: Ուրեմն ծիծաղելի է հաւատալ ինչպէս շատ մը ուրիշներ թէ՛ տիեզերքի բլրաւոր երկնային մարմիններու մէջ միեւնոյն մեր աշխարհը կեանք կը կրէ իր մէջ: Դեռ անհամար արեւներ կան որոնք կեանքի համար լոյս և ջերմութիւն կուտան անհամար մոլորակներու:

5—ԱՐԵՒԷ ՄԵՌՆԵԼՈՒ ՎՐԱՅ Է

Մեր կեանքը կը պարտինք արեւին: Արեւ՝ անհաւատալիօրէն իւրաքանչիւր երկվայրկեան 4,000,000 թօն տարողութեամբ ոյժ զուրս կ'արձակէ, ասկէ խիստ աննշան կոտորակ մը, այսինքն օրը 160 թօն ոյժ միայն կը հասնի մեր աշխարհին: Ի՞նչ անսպառելի աղբիւր է այդ: Արեւին ոյժ սպառելէն և ճառագայթարկումէն կը թուի թէ լուսատու մոմի մը նման օր մը պիտի չիջի: Աստղաբաշխները կ'ըսեն թէ արեւը երթալով կը փոքրիկնայ ծաւալով: Բարեբաղդաբար մեր երկրէն մէկ միլիոն ծաւալով աւելի ըլլալով մէկ եռիլիոն տարիներ պէտք պիտի ըլլայ որ իր ծաւալին մէկ տասերորդը կորսնցնէ: Երբեմն գիտուններ կը կարծեն թէ արեւ և աստղերը այս անսպառ ոյժերը կ'արտադրեն փճացնելով իրենց բուն գոյնը: Եթէ նախ ինքզինք փրճացնելով ոյժ առաջ կուգայ, ինչո՞ւ ուրիմն ոյժերը միացնելով չ'կազմին նիւթը: Եթէ այս ճշմարտութիւն մ'է, ուրիմն տիեզերքը անընդհատ նորոգութեան մէջ պիտի գտնուի. հակառակ այն գաղափարին թէ տիեզերքը վերջապէս դէպի ոչնչութեան կ'երթայ:

6—ՏԻԵՋԵՐԲԻ ԿԵԴՐՈՆԸ

Շատ չեղաւ երբ արեւը տիեզերքի կեդրոնը կը հաւատացուէր, իսկ Ծիր-

կաթին վերջաւորութիւնը կը հասնէր 10000 լոյս—տարիներ անդին, երբ Տր. Շափլի երկու տարի առաջ ստուգեց թէ մեր տիեզերքի կեդրոնը կը գտնուի աղեղնաւորի (Sagitaruis) մօտերը, սանկ 50000 լոյս—տարիներ անդին: Այս միութիւն կեդրոնի մեծութիւնն ու ոյժը խորհրդաւոր մթութեան մէջ թաղուած է, վասնզի մեր տիեզերքի կեդրոնը նիւթի մութ ամպերու ետին պահուած է: Լոյսը չի թափանցիր հոն: Մենք չենք կարող տեսնել այդ հեռաւոր և խորհրդաւոր կեդրոնը որսւն շուրջ արեւը և իր դրացի երկնային մարմինները կը սուրան իւրաքանչիւր երկվայրկեանը 200 միոն արագութեամբ, հոլովուելով հարիւր հազար միլիոն տարի և դարեր այդ կեդրոնին շուրջ: Բայց յոյս կայ որ տիեզերքի կեդրոնը միշտ հանելուկ չպիտի մնայ և մերձեցած է լուծման օրը:


Թէպէտ լոյս չէ կարող հասնիլ մեզի այդ տիեզերքի կեդրոնէն, բայց 200 մասնաչափ հեռադիտակը պիտի օժանդակէ մեզ լուծելու այդ հանելուկը, ձգողութեան ոյժերը միջադրեալ ամպերու մէջէն կը գործեն: Փոքրիկ հեռադիտակները անկարող են ցոյց տալու աստղերու շարժումները, օր մը պիտի զգանք այդ հսկայ կեդրոնի քարշողական ոյժը բայց առանց կարենալ տեսնելու բուն քաշող աստղերը:

(Շարունակելի)

ԲԺՇԿԱՊԵՏ Ա. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Տոգթ. Ա. Ալթունեանի բժշկութեան յիսնամեայ յորելեանին հանդէսը կատարուեցաւ իր պատշաճ չքեղութեամբը ինչպէս որ մեր անցեալ թիւին մէջ գրած էինք: Ասիկայ եղական դէպք մը պէտք է նկատել ոչ միայն հայ կեանքի, այլ նաեւ բոլոր Հիւս. Սուրիոյ ժողովուրդին 1930ի տարեգրութեան մէջ: Յիսնամեայ, Ամերիկացի, Հայ, Հրեայ, Արաբ իսլամ,

և ամէն գաւառանքէ արաբախօս քրիստոնեաների եկած էին Նոյ. 26 ի գիշերը իրենց անկեղծ յարգանքը և համակրանքը յայանելու մեծ վիրաբոյժ—բժիշկին: Ստորեւ մեր ընթերցողներուն քաղուածաբար կը ներկայացնենք հինգ լեզուներով խօսուած կամ կարդացուած ուղերձները, որոնք մեծանուն Յորելեարը կը ներկայացնեն իբր մարդասէր և ազ-



ԲԺՇԿԱՊԵՏ Ա. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ

նիւ հոգի մը, հայութեան ծառայող մը, մեծ բժիշկ և ճարտար վերաբոյժ մը հայն: Բայց այս բոլորին մէջ գրեթէ մոռացութեան արուած է սա պարագան թէ Տոգթ. Ա. Ալթունեան առաջին կարգի գիտնական մ'է նաև, որ իր ճիւղին սիրահարն է, գայն նկատելով գիտական անպարէզ մը գիտութեան իսկ ծառայելու համար, չյոժարելով սովորական արհեստի մը ցածութեան վրայ իջնել զայն՝ զրամ շինելու իբր միջոց միայն գործածելով բժշկութիւնը, որուն միջոցաւ թէպէտ մեծ հարստութեան տիրացած է արգարօրէն:

Վեր. Կ. Յարութիւնեան, որ յայտարարելու կը վարէր, թրքերէն լեզուով բացման խօսքը բնական յայտնելով ներկայ հաւաքոյթին նպատակը, և ներկայացնելով յարգելի Յոսեփեարը մէկը մեծ մարդերէն սրտնք՝ կ'սկսին ապրիլ բայց չեն մեռնիր: Ապա բեմ հրաւիրեց Տ. Ա. Եպս. Սիւրմէեանը նախագահելու հանգեցին, որ Վեհ. Սահակեան թողիկոսին կողմէ հեռագրաւ փոխանորդ կարգուած էր: Սրբազան Առաջնորդը Վեհափառին կողմանէ գրուած օրհնագիր մը կարգաց, զոր կուտանք նոյնութեամբ:—

ՍԱՀԱԿ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԴՐԻՍՏՈՒԵԼԻ ԱՆՀԱՍՈՒՆԵԼԻ ԿԱՄՕՐՆ ԱՍՏՈՒՅՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՄԵՆԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Մտերիմ բարեկամի մերոյ, բժշկապետ Ա. Ալթունեանի առատագիւղ օրհնութիւն յԱստուծոյ և ի մէնջ ողջոյն սիրոյ:

Սրտագին հրճուանքով և գոհունակութեամբ կ'ողջունենք Ձեր բժշկական յոբելեանը յիսնամեանի, որ թէև Ս. Գրական նշանակութենէն ու կիրարկումէն հեռացած է, բայց ընկերային արդի ըմբռնումով եղած է հանգրուան մը, ուր օգտակար ծառայութեամբ կազմուած արժանիքը կը գնահատուի ու կը փառաւորուի:

Բովանդակ Սուրբոյ և մասնաւորապէս Հալէպի ժողովուրդը առանց ցեղի կրօնքի և դաւանանքի տարբերութեան այս Ձեր յոբելեանի խրախճանքին մէջ կը գնահատէ Ձեր բժշկական տաղանդը ու ճարտար վերաբուժի արհեստը, զոր յիսնակ տարիներէ իվեր ի սպաս դրած էք թեթեւեղելու համար մարդկային առողջանքն ու հիւանդութիւնները:

Մենք յանուն հայ ժողովուրդին մասնաւոր գոհունակութեամբ կը տարփողենք Ձեր օգտակար ծառայութիւնները, զորս մատուցած էք և կը մատուցանէք Ձեր ազգակիցներուն՝ գործի ձեռնարկելու օրէն իվեր: Հայ ժողովուրդի համար ազգային հպարտութիւն մ'է նաև, իբրեւ բժշկապետ և ճարտարագոյն վերաբոյժ Ձեր գրաւած գիրքը այս երկրին մէջ ու Ձեր վայելած արդար հռչակը գիտական աշխարհի ու Միջագետքի ու Սուրբոյ խորերը:

Այն գնահատանքը իբրեւ փառապատակ կ'արժէքաւորէ նաև Ձեր յոբելեանը, որովհետև չէ՛ք անոնցմէ, որ Յոսեփեանով կը փառաւորուին, ու ըստ ամենայնի վստահ ենք թէ Ձեզ համար գերազանց վարձատրութիւնը անփոխարինելի սփոփանքն է Ձեր սրտին, որ թէև տարիներու պատկանելի չըլան մը բոլորած է, բայց շատ կորովի է գեռ ընդհանուրի ցաւերուն ցաւակից բարախումներով:

Կ'աղօթենք սրտեռանդն, որ Աստուած օրհնէ Ձեր տարիներու պսակը և քաղցրացնէ Ձեր երիտասարդ ծերութիւնը առատածիր ողորմութեամբ, որպէսզի երկար տարիներ ծառայէք հիւանդ մարդկութեան:

Կ'օրհնենք զՁեզ որդւովք ու թողորմք և ամուրի և մտերմական անկեղծ սիրով ողջունելով:

Մնամք աղօթարար

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Տոգթ. Գարեգին Սիւնի նախկին Կ. Թ. Գոլէճի բժշկական դպրոցին մէջ Յոբելեարին ուսուցիչը, անոր մէկ կենսագրականը տուաւ. կարճ յառաջաբանէ մը հոգը շարունակեց. —

Յարգելի հանդիսականներ,

Տօքթօրը 60 տարիներէ ի վեր կը ճանչնամ, երբ ինք պատանի մը՝ ու ես երիտասարդ էի: Այդ թուականէն առաջ ունեցած ծանօթութիւններս առած եմ իմ մեծ հօրմէս՝ բժիշկ Մելքոնէ, որը 92 տարեկան հասակին մէջ, 1869 ին մեռաւ եւ Տօքթօրին հօրեղբայրը՝ բժիշկ Նշանէ որը իմ աներս էր:

Տօք. Ալթունեան թոռն է Սեբաստիոյ հին, ծանօթ ընտանիքներէն Մհտ. Աստուածատուր աղա Մշշուկեանի, որը իբր բամպակի մեծաքանակ վաճառական, մեծ հարստութեան տիրացած ըլլալուն համար հանրութեան կողմէ Ալթուն Օղլի կոչուած է ու այդ մականունը մինչեւ ցարդ կը շարունակուի: Մհտ. Ասատուր Աղա բարեպաշտ ու եկեղեցասէր էր: Իր օրով կառուցուած փառաւոր Սբ. Աստուածածին մայր եկեղեցւոյ շինութեան սատարելը եւ իր տիկնոջ ու աղջկանը հետ Երուսաղէմ այցելելու տաժանելի, մեծածախս ուխտագնացութիւնը իր բարեպաշտ ըլլալուն ապացոյցներ են:

Անկասկած ենք թէ նոյն ատեն վաշելած էր ազգեցիկ Եէնիչէրի մը զօրաւոր պաշտպանութիւնը՝ որով կարող եղած էր Սեբաստիոյ ամենալաւ թաղը, երեք յարկէ տուն մը շինել ընդարձակ գետնի մը վրայ ու զայն կղմինտրով ծածկել, առաւելութիւն մը որ այն ատեն միայն վերապահեալ էր ոչ—քրիստոնեաներու: Այս պարագան յիշելի ուղղելու համար տմանց այն սխալ կարծիքը թէ՛ Տօքթօրը աննշան ծագեւմ մը ունեցած է:

Մհտ. Ասատուր աղայէն վերջ իր երեք զաւակները— Ռէթէոս, Նշան, Թադէոս

գժբաղտաբար չկրցին իրենց հօրը դիրքն ու նիւթական առաւելութիւնները պահել: Նշան՝ իմ աներս, և Թադէոս տօքթօրին հայրը՝ բժշկական ճիւղին հետեւեցան նախ Տօք. Զուէթին, ապա Տօք. Ուէսթին քով, որը յետոյ իմ ու Տօքթօր Ալթունեանին դասատուն եղաւ:

Միջանկեալ ըլլալով կ'արժէ հոս յիշել թէ Սեբաստիա և Այնթապ Ամերիկեան Պօրտի կողմէ զրկուած նախկին բժիշկ միսիօնարներ, բնիկներէն շատ մը բժիշկներ հասցունելով երկրին մեծ ծառայութիւն մատուցին: Որով Սեբաստիա և Այնթապ Հայ բժշկութեան որրաններ եղած են: Միայն Տօք. Ալթունեանի գերզաստանէն 10 և իմ գերզաստանէս 15 բժիշկներ ելած են: Կըրնամ ըսել թէ Սեբաստիոյ և Այնթապի բժշկական հոյլին ամէնէն փայլուն աստղը եղած է Տօք. Ալթունեան ու աւելի առաջ կրնամ երթալ և ըսել ամբողջ հայութեան:

Տօքթօրին հայրը Թադէոս, նախ Տօք. Զուէթին յետոյ Տօք. Ուէսթին քով բժշկական կրթութիւն առած և Զիլէի մէջ քանի մը տարիներու կարճատե գործունէութեամբ թոքատապէ մեռած է՝ թողելով իր երեք որդի զաւակները իրենց մօր խնամքին: Այն ատեն Ասատուրը 7 տարեկան էր:

Տօքթօրին մայրը՝ Թագուհի վարժուհի՝ Տէր Եղիայ Քահանայի աղջիկն էր: Ընտիր և հազուագիւտ կին մը, ու այն ատենուան Սեբաստիոյ կրթական մշակոյթի երեք վարժուհիներէն մին: Իր ամուսնին մահէն վերջ Սեբաստիոյ Սբ. Սարգիս թաղին եկեղեցւոյ դպրոցին վարժուհի եղած է: Իր որդի զաւակները մեծ անձնութեան խնամք, իւր պարագայ ժամերուն մէջ շարաշար կերպով աշխատանքներու ալ կը լծուէր, բամպակ մանել, հոր գործը և այլն գործեր ընելով: Տարակոյս չունիմ թէ մօրը անձնուէր ու ազնիւ նկարագիրը Տօքթօրին

ապագայ կեանքի ձիրքերուն վրայ հը-
զօր ազդեցութիւն ունեցաւ: Երբ ես ու
հօրեղբոր որդին Մելքոն Տօք. Ուէսթին
քով բժշկական ճիւղի կը հետեւէինք,
պատանի Ասատուրը մեր քով առինք,
ինք դեղեր կը պատրաստէր, դեղա-
րանի մաքրութեան կը հսկէր, շուկան
կ'երթար կռգար գործով. ու այսպէս
երեք տարիներ շարունակ գործեց, որ ա-
տեն թէ՛ Անգլիերէն լեզուի կը տիրանար
և թէ՛ դիտելով ու ունիդրելով, բժշկա-
կան գիտելիքներու մեծ պաշար կը հա-
ւաքէր: Այս շրջանի մէջ գնահատելի է-
ին պատանի Ասատուրին լուռ ու մունջ
աշխատասիրութիւնը, հնազանդութիւնը
և անտրտուն չհամբարատարութիւնը:

1873 ին Ամերիկայ գացի բժշկա-
կան ուսումը կատարելագործելու հա-
մար: Նիւ Եօրքի Բժշկական Համալսա-
րանէն վկայական ստացայ 1875 ին: 1876 ի
Յունվար 3 ին Ամերիկայի Պորտի վարչ-
ներու կողմէ Այնթապի բժշկական ճիւ-
ղին փրօֆէսօր կարգուեցայ: Արդէն
ինծմէ առաջ նոյն պաշտօնին կարգուած
էր բնիկ Ամերիկացի բայց իւր ուսման քը
Անգլիոյ Էտմալուրկի համալսարանը ա-
ռած՝ Տօքթօր Հէնրի Լի Նորիս որը
1876 էն մինչև 1878 գործեց. նա վրա-
բուժական գործողութիւններ կ'ընէր մեծ
ճարտարութեամբ, Այնթապի և չրճակու-
ները մեծ համբաւ չահելով: Տարի մը մի-
ասին կեցանք. ռակայն ինք բժշկական
ճիւղին գասախօսութեանց չմասնակցե-
ցաւ:

Ես Ամերիկայէն բաժնուեցայ 1876
Ապրիլ 1 ին եւ քանի մը ամիսներ Լոն-
տոնի ու Բարիկի հիւանդանոցները այ-
ցելելէս վիշ Պոլիս հասայ Յուլիոն.
ամսուն 28 ին 1876 ին կայսերական
վարժարանէն արտօնագիրս առի: Աս-
տիճան մը հետաքրքրական է, քանզի
գլուխը տպուած թուղթայի մէջ Սուլ-
թան Մուրատ Ե. ի անունը կայ: Օգոստ,
3 ին տեղի ունեցող Սուլթան Ապաիւլ

Համիտի գահակալութեան հանդէսը
տեսնելէս քիչ վերջ Ամասիա գացի:
Հոն երիտասարդ Ասատուրը գտայ, որը
ձգած էր Տօքթ. Ուէսթի մօտ, իմ 3
տարի առաջ մեկնած ատենը: Հոկտ.
7 ին ամուսնացայ, որուն հրապարակային
ծանուցումը Ասատուրը ինք բարի եղաւ
գրել և Բողոքական Եկեղեցւոյ ղուռը
փակցուց: Քանի մը շաբաթ վերջ Ա-
մասիայէն ծննդավայրս Սեբաստիա մեկ-
նեցանք, ուր հարկ եղաւ տարի մը սպա-
սել պաշտօնիս զուլս անցնելէս առաջ:
1877 ին Այնթապ գացի և բժշկական
ճիւղին առաջին դասը կազմող 12 երի-
տասարդներով գասախօսութեան սկսայ:
Յաջորդ տարուան գարնան՝ Ամասիա
ընտանիքս բերելու երթալով, վերադար-
ձիս երիտասարդ Ասատուրն ալ հետս
բերի Այնթապ: Տօքթօրը այս երեք
տարիներու շրջանին՝ մեր տան մէկ ան-
գամն էր, նոյն ատեն դեղագործս: Հի-
ւանդանոցի ու անձնական իմ բոլոր աշ-
խատութիւններուս մէջ՝ լաւագոյն օգ-
նական և աջ բազուկս եղաւ, սիրայօ-
ժար ջանասիրութեամբ:

Բժիշկ ըլլալով, յաջորդ շրջանին հի-
ւանդանոցին քլինիքներու եւ դեղարա-
նի վերատեսուչի պաշտօնը տրուեցաւ
իրեն Այնթապի մէջ:

Ես 1882 ին պաշտօնէս հրաժարելով
Այնթապէն մեկնեցայ: Տօքթօրէն հե-
ռանալէս վերջն ալ չեմ գաղրած հետա-
քրքրուիլ իր երիտասարդական գործօն
շրջանի յառաջդիմութեան շարժումնե-
րով: Ինք Այնթապ 3 տարիներ բժշկա-
կան դասեր աւանդեց, յետոյ արհեստը
կատարելագործելու համար Ամերիկայի
Պօլօմպիա համալսարանը ուսած և 1885
ին վկայականը առած է: 1887 ին Այն-
թապ փրօֆէսօրի պաշտօնով վերադար-
ձած է: Երկու շրջան ալ մինչև 1899 դա-
սախօսած է Այնթապ բժշկական ճիւղին
փակուելէն առաջ: Այս միջոցին կեան-
քին համար բարեբաղդութիւն մը կ'ըլլայ

կենակիցի մը ընտրութիւնը՝ Այնթապի հիւանդանոցին Անգլիացի հիւանդապահ Միս Րիտը՝ Միսիս Ալթունեան ըլլալով, որ իր ունեցած բարձր կրթութեամբ, փայլուն ձիրքերով, ազնիւ եւ հեղահամբոյր բնաւորութեամբ Տոքթորին գործունէութեան ճամբուն մէջ մենտորի մը յիշատակուելու արժանի դերը ունեցաւ:

Համառօտ կենսագրականէ վերջ կարժէ քանի մը գործնական դասեր հանել:

1. Տոքթորը իր կեանքի բոլոր շրջաններուն մէջ իրեն հանդիպած պատեհութիւններէն օգտուելով ապագան հեռատեսած է:

2. Իր ժառանգական թագուն ուժերուն եւ միջավայրի ընծայած առաւելութեանց գիտակից՝ զօրաւոր կամքով ու յամու աշխատութեամբ, իր ընդգրկած ասպարէզին մէջ արժեցողացած է զանոնք:

3. Իր ուսանողութեան շրջանին մէջ արհեստին սիրահար, եւ անխոնջ ուսանող մը ըլլալով մինչեւ այսօր միեւնոյն գովելի յատկութիւնները հաւատարմութեամբ կը պահէ:

4. Խոհուն եւ լուրջ՝ երիտասարդ Ասատուրին պատկերին դրոշմը չափահաս Տոքթ. Ալթունեանի գէմքին եւ երկար տարիներու գործունէութեան արդիւնքի վրայ անփոփոխ կը տեսնեմ:

Տր. Ճ. Մէրիլ, Հալէպ Գոլէճի Նախագահը անգլիերէն ճառ մը կարդաց, որով ներկայացուց յորելեարին ուսանողական կեանքը (1878—81) Այնթապի բժշկական դպրոցին մէջ, ուր ինը դասընկերներուն մէջ վեցերորդը հանդիսացած է, իր միջին նիշերուն համեմատ. քիմիադիտութեան դասին մէջ, սակայն, առաջնութիւնը չահած է: Յիշեց նաեւ թէ երիտասարդ Ասատուրը Այնթապի Գոլէճին բժշկական ճիւղին մէջ ուսուցիչ եղած է 1881—82 ին 30 Օսմ. Ոսկի տարեթիւով, յաջորդ տարին 65 եւ եր-

րորդ տարին 70 ոսկիով: Երկու տարի արտասահմանի մէջ ուսանողական կեանք ունեցած է կատարելագործելու իր ճիւղը, եւ 1887 ին Այնթապ վերագարծած է 100 Օսմ. Ոսկիով գործելու իբր փրոֆէսոր բժշկական ճիւղին մէջ եւ երկու տարուայ դասաւանդութիւնէ հտքը վերջնականապէս հրաժարած է: Երկրորդ տարին 185 Օ. Ո. տարեթիւ հաշուած է: Այս շրջանին իրեն պաշտօնակից եղած են Տոգթ. Ֆ. Տ. Շէփրտ եւ Տոգթ. Հէրիս Կրէշէմ: 1905 էն սկսեալ Տոգթ. Ալթունեան եղած է Գոլէճի Վարչական Ժողովին անդամ, պաշտօն մը զոր մինչեւ հիմա կը վարէ, ցկեանս այդ մարմնին մասնակցելու ընտրուած ըլլալով: Տոգթ. Ալթունեան իբր Վարչականի անդամ Գոլէճին մեծապէս ծառայած է նիւթական եւ բարոյական կերպով, ծառայութիւն մը զոր նոյն կորովով եւ հաւատքով կը շարունակէ մատուցանել Հալէպ Գոլէճին, որուն համար ամէնէն նուիրեալ աշխատողներէն եղած է, Հիւսիսային Սիւրիոյ մէջ այսպիսի հաստատութեան պէտքը ամէնէն աւելի պարտաւորութիւն մէկն ըլլալով: Տր. Մէրիլ երախտագիտութեամբ յիշեց նաեւ Յորելեարին բժշկական ծառայութիւնը, մասնաւորապէս Տոգթ. Գարոլին Համիլթընի եւ Տրկ. Թրոպրիճի, կինը Տր. Թ. Թրոպրիճի: Ապա Յորելեարին համար Տիրոջ օրհնութիւնը եւ ծառայութեան երկար կեանք մը մաղթելով վերջ տուաւ իր խօսքին:

Տիար Հրանտ Սիւլահեան հայերէն լիզուով կարճ ուղերձ մը խօսեցաւ զոր կուտանք ստորեւ.—

Տոգթ. Ա. Ալթունեան իբր միջադպրոցի համաւեր տէր մարդ օգտակար եղած է, բայց նահայ ծնած, հայ մեծցած հայ ապրած է նիւթապէս, մատուորապէս եւ իբր բժիշկ: Եւ Տոգթորը կը տեսնեմ իբր մեծ մարդ: Ոմանք մի քանի ոսկիներ գիշերէ վերջ կը մոռնան իրենները:

Տոգթ. Ալթունեան այդպէս չէ, Տոգթ. Ալթունեան որչափ մեծցած և բարձրացած է այնչափ աւելի խոնարհ և ազնիւ եղած է: Կը մաղթեմ որ պատիւը ունենանք անոր աղամանդէ յոբելեանը տօնելու, և իրեն նման շատ հայ բժիշկներ ունենալու:

Հրեայ հասարակութեան կողմանէ Ալիանս Իսրայէլիթի տնօրէն Մ. Փէնսօ խօսեցաւ Քրանսէրէն լիզուով: Նախ յայտնեց թէ «չկայ Հալէպի մէջ Հրեայ ընտանիք մը որ չպարտի իր ընտանիքին անդամներէն մէկուն կամ շատերուն կեանքը Տոգթ. Ալթունեանի գիտութեան, և ապա Յոբելեանին բարոյական, մարդասիրական, գիտակտն առաւելութիւնները ու առաքինութիւնները թուեց ներկայացնելով զայն իբր կենդանի համայնագիտարանի տէր համբաւ մը, իբր ճարտար վիրաբուժ և բժիշկ ներքին հիւանդութեանց, իբր անխոնջ աշխատող անդադար կատարելագործելու իրարհետը: Յիշեց թէ ինչպէս Ք. ճառագայթի գործիքը հաստատեց իր դարմանատան մէջ, 1895ին, անոր գիւտէն երկու տարի ետքը միայն, թէ ինչպէս Հալէպը օժտեց արդիական հիւանդանոցով մը, «ուր», ըսաւ «բազմաթիւ օտար բժիշկներ մեր քաղաքէն անցած ատենին շտապելու հնարք ելել, և ամէնքը յայտարարեցին որ Տոգթ. Ալթունեանի հիւանդանոցը կրնայ մրցիլ Եւրոպայի ամենալաւ հիւանդանոցներուն հետ, իր մանրէարանական աշխատանոցով, ախտաբուժական սպասարկութեամբ, Ք. Ճառագայթով, արեան փոխանցումի սպասարկութեամբ և այլն»:

Ապա կը բացատրէ անոր գործնական միտքը երկու զուարճալի մանրազնայեանքով, կը յիշէ անոր սիրելի, ժպտուն դէմքը որ հիւանդին վստահութիւն կը ներշնչէ, կը շեշտէ մասնաւորապէս առանց դաւանանքի խտրութեան ազգատներու հանդէպ «անոր ցոյց տու-

ած անձնութիւնը և բոլոր Հալէպցիներուն» նոյն խոհրդոր Հիւս. Սուրիոյ բնակչութեան մատուցած ծառայութիւնը 1889է ի վեր՝ երբ Տոգթ. Ալթունեան Հալէպ եկած է առաջին անգամ: Ու կը վերջացնէ հետեւեալ բառերով:—

«Բոլոր քաղաքակիրթ երկիրներ կը պատուեն իրենց մեծ մարդերը, և արձաններ կը կանգնեն անոնց յիշատակը յաւերժացնելու համար: Տակաւին մենք չենք տեսներ Հալէպցիներու բարերարին արձանը, որուն յարեւանը կը տօնենք այսօր: Անշուշտ մենք չենք տեսներ անոր մարմարէ կամ պղինձէ արձանը, բայց մենք կը ճանչնանք անոր արձանը մարմնոյ և արեան մէջ: Մենք կը ճանչնանք անոր բազմաթիւ արձանները Հալէպցիներու սրտերուն մէջ: Հարիւրաւոր Հալէպցի տիկիները զայն կ'օրհնեն առտու և իրիկուն...: Երանի թէ կարենայինք պատիւը ունենալ տօնելու մեծ վիրաբոյժին բժշկութեան 75րդ տարեդարձը:

Կեցցէ՛ Տոգթոր Ալթունեան:»

Տոգթ. Ապտիւրահման Բէյալի արարեղէն դրուատալից ուղերձ մը ըրաւ զոր կ'ամփոփենք ստորեւ:

Արիստոտել հարցումի մը պատասխանելով ըսաւ թէ մարդը կատարեալ պիտի ըլլայ երբ գիտութիւնն ու փրութիքը կատարեալ ըլլան: Ասոնցմէ օւնէ մէկը առանց միւսին թերի է: Տոգթ. Ալթունեանի մէջ այս երկուքը միացած կը գտնենք: Ապա բացատրեց թէ գիտութիւնը ի՞նչ է և ի՞նչ չէ: Եւ յայտնեց թէ բժշկութիւնը ո՛չ շարլաթանութիւն է, և ո՛չ ալ արհեստը սափրիչներու, նպարազաճառներու և կեղծ բժիշկներու: Եւ յիշեց իբր ճշմարիտ գիտուն բժիշկներ Տոգթ. Փոսթը և Վարդապետը:

Հալէպի մէջ բժշկութիւնը, ըսաւ ան,

իր գիտական նոր շրջանին մտաւ երբ 1889 ին Տոգթ. Ալթունեան Հալէպ հաստատուեցաւ: Եւ ապա Յոբելեարին պիտի ճախօս մէկ գովեստը հիւսեց նկարարելով անոր բժշկական և վիրաբուժական կարողութիւնները և 1911 ին հաստատուած Ալթունեան Հիւանդանոցին արդիական կատարելութիւնը:

Ապա ծանրացաւ Յոբելեարին բարոյական յատկանիշերուն, անոր անխնայ աշխատասիրութեան, անկուշտ մեծաբաղձութեան բժշկութիւնը զարգացնելու համար, իր սկզբունքներուն կիրարկումին մէջ ցոյց տուած օրինակելի անվախութեան, ուշիմութեան, ճիշդ գատողութեան մասին և կոչեց զայն մարդկութեան բարերարը: Յանուն իր պաշտօնակիցներուն և Հալէպցիներուն Տոգթ. Ալթունեանը շնորհաւորելէ և իր բարեմաղթութիւնները ընելէ հտք, վերջ տուաւ իր խօսքին:

Տոգթ. Կապրէի Եւփալիէ Հալէպի բժշկական ընկերութեան նախագահը, Փրանսերէն կարճ բայց համակրալիք ուղերձ մը կարդաց յանուն յիշեալ սէնտիքային և ծանրացաւ Յոբելեարին կերպին վրայ: Լաւագոյն դասը, ըստ ան, զոր կրնանք անոր գեղեցիկ կեանքին քննութենէն վեր հանել, կորովի արժէքն է: Եւ յիշեց Նափոլիոնի սախօսքը թէ «Յաղթութիւնը ամէնէն աւելի հաստատամտութեան արդիւնքն է»: Այնպէս կ'երեւի թէ, ըստ, Տոգթ. Ալթունեան իր բոլոր կեանքին մէջ այս հիւանալի առածը իւրացուցած է և ուղած է ցուցնել թէ զայն կիրարկելով մարդ ինչպիսի՝ բարձրութիւններու կըրնայ հասնիլ: և ասոր իբր օրինակ յիշեց անոր հիւանդանոցը, որուն վրայ հիւացումով արտայայտուեցաւ: Ապա իր շնորհաւորումները և բարեմաղթութիւնները ընելէ հտքը հաստատամտութեան և յաղթելու կամքին մասին Սենեկայէն

մէջբերում մը ընելով վերջ տուաւ իր խօսքին:

Փրանսայի հիւպատոզը և Բարձր Գոմիսէրի Հալէպի պատուիրակը Մ. Լաւաթթը նաև կարդաց գեղեցիկ ուղերձ մը որուն ամփոփումն է. —

Յիշելով թէ «այսօր եկած ենք Տոգթ. Ալթունեանի կէս դարու կեանքին քննութիւնը կատարելու», յայտնեց անոր յաջողութեան կարևորութիւնը, քանզի ըստ Վսեմ. խօսողը, ան ուրիշ շատերու նման իր յաջողութիւնը չի պարտիր բարեբաւարիկ սկզբնաւորութեան, ընտանիքին, զիրքին, բարեկամներուն կամ բախտին, այլ միմիայն իրեն: Յաջողութեան համար ամէն բան իրեն կը պակսէր գործի սկսելու ատեն: Ապա զրուատեց անոր յաջողութիւնը իր արուեստին մէջ, հարստանալու մէջ և բարոյական զիրքին մէջ: Յիշեց յարգելի Յոբելեարին իբր հայ ծառայութիւնը իր ազգակիցներուն, «բայց» յարեց Վսեմ. Պատուիրակը, «ան չդադրեցաւ իր զործունէութիւնը լայն սահմաններով տարածել բոլորին վրայ առանց ցեղի և կըրօնքի խտրութեան»:

Շնորհաւորեց Տոգթ. Ալթունեանը իր ծառայութեան համար և չմոռցաւ նաև յիշել անոր օգնականները, մասնաւորապէս Քափիթէն է. Ալթունեանը, և Տիկ. է. Ալթունեանը, Օր. Ալթունեանը, ներկայիս կ'են Մ. Էտուարտ Ծովէի, Փրանսական ներկայացուցիչը Սիամի մէջ: Վսեմ. Պատուիրակը բարեմաղթութիւններով վերջ տուաւ իր ուղերձին:

Այս բոլորէն հտքը բեմ բարձրացաւ յարգելի Յոբելեարը, հանդիսականներու ծափահարութեանց մէջ և զգացուած շեշտով կարդաց հետեւեալ ուղերձը:

Սրբազան Հայր, Վսեմ. Տիարք Պատուիրակ և Զօր. Հիւս Սուրբոյ Բանակի: Ազնուափայլ Տիկնայք և Տիարք,

Մեծապէս երախտապարտ ըրած են զիս Վեհ. Հայրապետին շնորհաւորական հեռագիրը և ձեռագիր նամակովը յայտնած շնորհալից համակրանքը, և այս պատկառելի հաւաքոյթին մէջ ինծի հիացում առթող գերայարգ անձնաւորութիւնները, նամանաւանդ իր անձնաւորութեամբը յոյժ պատկառելի և բոլորին սէրն ու վստահութիւնը շահող Վեհմ. Տիար Լավասթըր, Պատուիրակ Բ. Գոմիսէրութեան, և զորովալից Զօրավար Միւսիւ Փիշօ տը Քլօ, Վեհմ. Հիւպատոսներ, կառավարական քաղաքային և զինուորական պաշտօնեաներ, հոգևոր պետեր, ինծի պաշտօնակից յարգելի բժիշկներ, երեւիլիներ, պարոններ, տեղացի և օտար բարեկամներ, որոնք իրենց հանդիսը զոհելով գիշերուան այս պահուն հոս հաւաքուած են բժշկական ասպարէզը մտնելուս յիսուններորդ տարեգարծին առթիւ զիս շնորհաւորելու համար: Իսկապէս լեզուս անկարող կը գտնուի արտայայտելու իմ ներսիցիս եռուզեռող շնորհակալութեան զգացումներս:

Տիկիւններ և Պարոններ,

Այս գիշեր ձեր ներկայութիւնը զիս գերեզանցօրէն ուրախ և շնորհապարտ թողուցեր է:

Տոգթ. Դ. Սիւնիի խօսքերը ինծի յիշել կուտան իմ պատանեկան և երիտասարդական կեանքս:

Տիար Հ. Սիւլահեանի, Տր. Ճ. Մէրիլի, Տոգթ. Ա. Բէյալիի, Տիար Փէնսոյի, Հ. Գաբրիէլ Վ. Գասպարեանի գնահատալից բառերը ինծի յիշել կուտան այն պարտականութիւններս զորոնք չեմ կրցած կատարել: Պաշտօնակիցս քաջաճարտար բժիշկ Տոգթ. Կ. Շըվալիէի ազնիւ խօսքերը ինծի մտաբերել կուտան բժշկութեան մէջ ունեցած թերութիւններս:

Իրապէս կ'զգամ թէ այս բոլորը իմ արժանիքէս վեր են:

Կ'ուզեմ յայտնել թէ իմ անցուցած կէս դարու շրջանիս միջոցին բազմապիսի արկածներէն զերծ մնալով հիմայ ողջ առողջ ձեր առջև ներկայութիւնս մի միայն Աստուածային նախախնամութեան կը պարտիմ:

Բժշկութեան մէջ ունեցած հռչակիս և յաջողութեանս համար՝ բժշկութիւնը պարգայնող մեծ գէմքերու երախտապարտ եմ, որոնք բժշկութեան մէջ մեզ ապահով ճամբաներու առաջնորդած են:

Հայրս և ազգականներէս շատերը բժիշկ ըլլալով ես ալ եօթը տարեկան եղած ստեղծութեանս որոշած եմ բժիշկ ըլլալ և այս որոշումէս երբեք վազ չանցայ:

Բժշկական ուսումի սկսելէս առաջ Տոգթ. Ուէսթի և ուրիշ բժիշկներու հետ ունեցած սերտ յարաբերութեան շնորհիւ բժշկութեան գործնական մասին մէջ բաւականաչափ ծանօթութիւն ստացեր էի: Եւ երբ դպրոց մտայ ժամանակիս կարեւոր մէկ մասը բժշկութեան գիտական տեսական մասին յատկացուցի: Նպատակս էր բժշկութեան ուսուցիչ ըլլալ: Այս փափաքիս գոհացում տալու համար Ամերիկայի մէ Եւրոպայի մէջ ուսումս կատարելագործեցի և Այնթապի Բժշկական Դպրոցէն հրաւէր ստանալով հոն գացի: Տոգթ. Շէֆըրի և Տոգթ. Կրահամի հետ այս հաստատութեան մէջ կարճ շրջանի մը համար աշխատակցելէ ետքը կառավարական արգելքին պատճառաւ Այնթապի Բժշկական Դպրոցը փակուեցաւ: Յուսալով որ քիչ վերջը ան կը վերաբացուի, առժամայ մնալու համար Հալէպ եկայ, որպէսզի երբ զըպրոցը վերաբացուի հոն վերադառնամ: Սակայն նախախնամութիւնը այլապէս տնօրինած էր: Այնթապ վեռագառնալու յոյսս իզիրեւ ելաւ: Միևնոյն ատեն մինչդեռ Ամերիկա և ուրիշ տեղեր ինծի համար պատրաստ յարմար գիւրդեր կային, Հալէպին մէջ իմ տեսած պէտքը, ժողովուրդին ցուցուցած համակրանքն

ու սէրը զիս մղեցին նախամեծարել Հալէպի ըլլալ:

Տակաւ առ տակաւ սկսայ սիրել նաեւ բժշկութեան գործնական մասը. անոր մէջ ազնուութիւն մը տեսայ. անոր մէջ ցեղի և կրօնքի, հարուստի և աղքատի, բարեկամի և թշնամիի, տոհմիկի և ռամիկի, մեծի և պզտիկի, գիտունի և սղփալի բոլոր տարբերութիւնները անյայտացան, և միայն ծառայութեան և եղբայրութեան անուշ հոգին իշխեց:

Տիկիններ և Պարոններ,

Կրկին շնորհակալութիւնս յայտնելով ձեր ցոյց տուած համակրանքին և սէրին համար՝ կը մաղթեմ որ ձեր բոլորն ալ ողջ և առողջ ապրիք և Աստուած ձեզմէ ունէ մէկուն շնորհէ ձեր ասպարէզին յիսնամեայ յոբելեանը տօնելու ուրախալի առիթը:

Այս բոլոր ուղերձները անկարող են Տոգթ. Ալթունեանի ունեցած յիսնամեայ գործունէութիւնը ներկայացնելու գիտական և պատմական կերպով, անոնք աւելի հիացումով և երախտագիտական զգացումով խառն յարգանքի և շնորհաւորումի արտայայտութիւններ են, որոնց կատարելապէս արժանի է ան:

Պէտք է հոս յիշել թէ Ալթունեան հիւանդանոցը իբր անհատական ձեռնարկ մը նոյնիսկ ևրոպայի մէջ եղական կը մնայ: Մերձաւոր Արեւելքի մէջ իր գիտական աշխատանոցներով, բժշկական բաղմակողմանի արգիական կազմերով եղական հաստատութիւն մ'է: Աշխարհիս այսմասին մէջ առաջին անգամ ըլլալով տարբեր ժողովուրդներու արիւնները գիտական քննութեան ենթարկուած և դասաւորուած են: Մինչեւ հիմա 3000 արեան քննութիւններ կատարուած են, որոնք Եւրոպայի մէջ առաջին գիտական հեղինակաւոր աղբիւրը նկատուած են: Այս քննութեանց համեմատ հայերը Եւրոպական խումբին կը մօտենան: Զը-

մոռնանք յիշել որ յարգելի Յոբելեարը առաջնակարգ օգնական մը ունեցած է յանձին իր որդւոյն Քէփթըն է. Ալթունեանի. որ 1918էն ի վեր կը գործակցի իր հօրը լայն չափով և մեծ ձեռնահաստութեամբ:

Տոգթ. Ալթունեանի հանգէպ իրենց յարգանքները զրական կերպով յայտնելու և այս հանդէսը յաւերժացնելու համար նուէրներ եղած են Հալէպի Հայ Աւետ. Համայնքին կողմանէ ոսկի մետաղ մը, որուն մէկ կողմը գրուած լատիններէն non sibi sed alleis servare (ոչ միայն քեզի այլ ուրիշներուն ծառայէ՛) իսկ միւս կողմը եռձեղ տերեւ մը: Հալէպի Բժշկական Սենտիքային կողմէ ոսկի ինքնահոս գրիչ մը, Հրեայ հասարակութեան կողմանէ կողկասեան ճաշակով արծաթէ ափսէ մը նուիրուած է: Հալէպի Հայոց Առաջնորդարանին կողմանէ արծաթէ ափսէ մը վրան Սահակ և Մեսրոպի պատկերները փորագրուած և արծաթէ ծաղկաման մը, վերջին երկուքը՝ գործը Գալէմքեարեան եղբարց: Ուրիշ շատ մը բարեկամներ ևս անհատական նուէրներ ըրած են:

Պէտք է հոս յիշել նաեւ թէ Հալէպի Վսեմ. Կուսակալը Նէպիհ Պէյ ևս գնահատական ուղերձ մը գրած էր, որ սակայն Հալէպի մէջ իր բացակայութեան պատճառաւ չկարգացուեցաւ: Հ. Գաբրիէլ Վրդ. Գասպարեանի կողմէ գրուած դրուատալից ուղերձ մըն ալ կարգացուեցաւ Տոգթ. է. Անթաքիի կողմանէ: «Նոր Աւետաբեր» ևս այս բոլորին հետ կուգայ իր ջերմ խնդակցութիւնները յայտնել մեծահուշակ Յոբելեարին, շնորհաւորելով զինք այս նըշանակելի տօնի առթիւ և մաղթելով կորով տակաւին երկար տառն ծառայելու մարդկութեան:

صاحب متياز و مدير المسئول
الاقيس قريهت هاروتوتيان